Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 42-Ա, 45-Ա, 47-Ն, 48-Ա-50-Ա, 51-Ն ԵՎ 52-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 42-Ա որոշման համարակալումը սխալ է գրառված:

«Թիվ 45-Ա» թվագրվածը որոշում չէ, քանի որ այն համայնքի ավագանու կողմից որպես որոշում չի ընդունվել: Անհրաժեշտ էր արձանագրությունների գրանցամատյանում նշվածի վերաբերյալ ընդամենն արձանագրել:

Թիվ 47-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում նշված «2019» թիվը փոխարինել «2020» թվով: Հավելվածի «1)»-ին կետի «բ» ենթակետում նշված «1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար»՝ «300000 (50000x6)» և «3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար»՝ «600000 (50000x6)» սահմանված դրույքաչափերը չեն համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի 3-րդ և 4-րդ պարբերություններով և 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված տեղական տուրքերի դրույքաչափերին: Նշված կետերով տեղական տուրքի դրույքաչափերը հաստատելիս կիրառվել է 6 գործակից: Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային քաղաքային այլ բնակավայրերում ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել՝ 1.0-3.0 գործակցի կիրառմամբ:

Հավելվածի «1)»-ին կետի «բա» և «բգ» ենթակետերով, «5)»-րդ և «7)»-րդ կետերով սահմանված տեղական տուրքերը և դրույքաչափերն անհրաժեշտ է հանել, «18)»-րդ կետի «ա» ենթակետում նշված «13 հա-ից» թիվը փոխարինել «3 հա-ից» թվով:

Որոշման N 2 հավելվածի 7-րդ կետով սահմանված աղբահանության վճարի դրույքաչափերն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված աղբահանության վճարի դրույքաչափերին:

Թիվ թիվ 48-Ա-50-Ա որոշումների նախաբաններում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմանը հղում կատարելիս «մասով» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «պարբերության» բառը:

Թիվ 51-Ն որոշումը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասին:

Թիվ 52-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում: Հետևաբար, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ն» (նորմատիվ) տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման 3-րդ կետը չի համապատասխանում որոշման բովանդակությանը: Բացի այդ, որոշմամբ հաստատված N 2 հավելվածում համարակալումը սխալ է գրառված, իսկ հաշվարկ բաժնում տարեկան առաջացած աղբի քանակի հաշվարկը չի համապատասխանում բովանդակությանը:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
21.01.2020թ.